ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մայիսի 2025 թվականի N 615-Ա

ԳՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-25/09 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի 2025թ.-ի կարիքների համար շչակների /ազդարարման համակարգերի/ ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-25/09» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ -ն (այսուհետ՝ նաև Ընկերություն): «ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ -ն որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից հաղթող է ճանաչվել 1-ին չափաբաժնի մասով:

«Գնումների մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի և հրավերի 1-ին մասի 10-րդ բաժնի 10.1-ին կետի համաձայն՝ Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումներ: Եթե ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 10 աշխատանքային օր: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է որակավորման և պայմանագրի (կանխավճարի) ապահովումները: 2025 թվականի ապրիլի 17-ին martunignum@mail.ru էլեկտրոնային փոստի միջոցով Ընկերությանը ծանուցվել է պայմանագրի նախագիծը: Ընկերությունը պայմանագրի կնքման ծանուցումը ստանալուց հետո, 5 աշխատանքային օրվա ընթացքում Մարտունու համայնքապետարան չի ներկայացրել իր կողմից կնքված պայմանագիրը (որակավորման և պայմանագրի ապահովումները), ինչպես նաև ուղեկցող գրությունը: «Գնումների մասին» օրենքի 36-րդ

հոդվածի 3-րդ կետի համաձայն, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով Օրենսդիրը սահմանել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու դեպքերն, այդ թվում՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա) խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ) որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից՝ հարկ է արձանագրել, որ «ԳՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-25/09 » ծածկագրով գնման ընթացակարգի առնչությամբ առկա է «ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու փաստական և իրավական անհրաժեշտ բոլոր հիմքերը, որով խախտվել է «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետը և նույն հոդվածի 2-րդ մասը՝ ***որոշում եմ.***

1. ԳՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-25/09 ծածկագրով գնման գործընթացի մասնակից «ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընկերության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև ներկայացված աղյուսակով:

Մասնակցի				
Անվանում	ՀՎՀՀ	Գործունեության հասցե	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքերը	Գնման ընթացակարգի ծածկագիրը
«ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ	08430756	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Աստղաձոր բնակավայր, 24-րդ փողոց, թիվ 1	«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի «բ» ենթակետ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	ԳՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-25/09

2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել «ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ-ին և ՀՀ Ֆինանսների նախարարություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. մայիսի 13
ք. Մարտունի